



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 08/16**

19.10.2016թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),

քննարկելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 01.07.1998, ուժի մեջ է մտել 12.01.1999)¹ 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ա. Հարությունյանի (ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության վարչության պետի տեղակալ Ա. Մանուկյան) (այսուհետ՝ Դիմող) 24.08.2016թ. դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է որոշել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ և 103 (176)-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանը դիմումն ընդունել է քննության և նիստը նշանակել 2016թ. նոյեմբերի 1-ին:

Դիմողը գտնում է, որ դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասին տրված մեկնաբանությունը, որը գլխավոր դատախազին հնարավորություն չի տալիս, ի թիվս գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների, վերացնելու նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

հետապնդման մարմնի որոշումը՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, զրկում է ՀՀ դատախազությանը որպես քրեական հետապնդման բացառիկ գործառույթ իրականացնող հանրային իշխանության կրողի, արդյունավետ ձևով իրականացնելու հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Ըստ Դիմողի՝ պետությունն ստանձնել է հանցագործությունից տուժած անձանց պատճառված վնասի հատուցման պարտականություն, որի իրացման մեխանիզմներից է նաև դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացումը: Ընդ որում, պայմանավորված ՀՀ դատախազության միասնականության մարմին լինելու սահմանադրական կարգավիճակով, եթե պետության նշված պոզիտիվ պարտականությունը չի իրացվում հսկող դատախազի կողմից, ապա դրա իրացման պարտականությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով կրում է գլխավոր դատախազը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված այնպիսի մեկնաբանությունը, որը ՀՀ գլխավոր դատախազին կզրկի նույն մասում նշված՝ օրենքի խախտմամբ կայացված քրեական գործը կարճելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը վերացնելու իրավունքից, կդիտվի որպես ՀՀ դատախազության՝ քրեական հետապնդման սահմանադրական գործառույթը սահմանափակող, ուստի ՀՀ Սահմանադրության 103-րդ (176)-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին հակասող և անվավեր: Վիճարկվող քրեադատավարական նորմը, Դիմողի դիրքորոշմամբ, հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքին այնքանով, որքանով վտանգում է հանցագործությունից տուժած անձանց՝ իրենց իրավունքներն ու ազատությունները պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ունենալու իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ և 103-րդ (176-րդ) հոդվածներին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք

գործերով արդեն իսկ բացահայտվել է Գիտավերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Հոդված 103.¹ Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

...

Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

1) *հարուցում է քրեական հետապնդում.*

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի

¹ Ըստ 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրության:

իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությունը**:

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը**՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը**՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը**՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին**՝ որպես արդար դատաքննության

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը¹:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «**Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների**, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»²:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

¹ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

² Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

³ Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունն անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն, այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով,

ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»¹:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

Իսկ 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող քրեադատավարական նորմի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 21. Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը

4. Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համապատասխանաբար՝ 25.05.2006 թվականի ՀՕ-91-Ն, 21.02.2007 թվականի ՀՕ-93-Ն և 28.11.07 թվականի ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով: Իսկ վիճարկվող դրույթների բովանդակությունը լրացվել է 21.02.2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-93-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի մարտի 15-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին¹:

Մինչև նշված փոփոխությունները դատախազի կամ գլխավոր դատախազի կողմից որոշակի ժամկետային սահմանափակմամբ համապատասխան որոշումների վերացման կարգ նախատեսված չէր ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ:

Կարծում ենք, վեճի առարկա հանդիսացող իրավադրույթի սահմանադրականության որոշման համար նախևառաջ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել քրեադատավարական համապատասխան դրույթում գործածվող որոշ հասկացությունների բովանդակությունը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասության մեջ՝ որպես **հսկող դատախազի** կողմից վերանայման ենթակա որոշումներ, նախատեսված են հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած հետևյալ որոշումները՝

¹ Ընդունվել է 21.02.2007թ., ուժի մեջ է մտել 15.03.2007թ., տե՛ս ՀՀՊՏ 2007.03.28/17(541):

ա) քրեական գործը կարճելու մասին,

բ) քրեական գործ հարուցելու մասին,

գ) քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Իսկ նույն դրույթի երկրորդ նախադասության մեջ, որպես **գլխավոր դատախազի** կողմից վերանայման ենթակա որոշումներ, նախատեսված են հետաքննության մարմնի և քննիչի հետևյալ որոշումները.

ա) գործի վարույթը կարճելու մասին,

բ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին,

գ) քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Ընդ որում, այս նույն որոշումների տեսակներն են թվարկված նաև 21-րդ հոդվածի 3-րդ մասում, որն այդ դրույթից բացառությունների համար հղում է կատարում նույն հոդվածի 4-րդ մասի վրա:

Կարծում ենք, սահմանադրաիրավական վեճի լուծման համար անհրաժեշտ է պարզաբանել, թե՝

ա) ինչպիսի՞ կապի և հարաբերակցության մեջ են գտնվում «**քրեական գործ**» և «**քրեական հետապնդում**» հասկացությունները,

բ) արդյո՞ք համարժեք են «**քրեական գործ հարուցել**» և «**քրեական հետապնդում հարուցել**» ձևակերպումները,

գ) նույնակա՞ն են արդյոք «**քրեական գործի հարուցումը մերժել**» և «**քրեական հետապնդումը դադարեցնել**» կամ «**քրեական հետապնդում չիրականացնել**» հասկացությունները:

Նշված հարցադրումների պատասխանները տալու համար անհրաժեշտ է նախ բացահայտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերոնշյալ քրեադատավարական հասկացություններին տրված իմաստն ու նշանակությունը:

Այսպես, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի (քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները) 2-րդ կետի՝ «**քրեական գործը**» քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված **արարքների** կապակցությամբ:

Նույն հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «**քրեական հետապնդումն**» այն բոլոր դատավարական գործողություններ են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում փոփոխվող՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած **անձին**, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործով:*

Նշված դրույթներից հետևում է, որ «քրեական հետապնդման» համեմատությամբ «քրեական գործն» ավելի լայն հասկացություն է, որը ենթադրում է դատավարական գործողությունների (վարույթի) իրականացում **արարքի (հանցագործության)** կապակցությամբ, մինչդեռ «քրեական հետապնդումը» դատավարական գործողությունների ամբողջությունն է, որոնք հարուցված քրեական գործի շրջանակներում իրականացվում են այդ արարքը կատարած **անձի** առնչությամբ: Եթե չկա հարուցված քրեական գործ, բացակայում է նաև քրեական հետապնդումը:

«Քրեական գործ հարուցել» նշանակում է՝ դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացում քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 181, 182):

«Քրեական հետապնդում հարուցել» նշանակում է՝ քրեական հետապնդման մարմնի (դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի) կողմից կայացվող որոշում անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 6, կետ 17):

Այսպիսով՝ համաձայն քրեադատավարական նշված նորմերի՝ քրեական գործը հարուցվում է հանցագործության դեպքով, իսկ քրեական հետապնդումը հարուցվում է՝ հարուցված քրեական գործով հանցանք գործելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի նկատմամբ:

«Քրեական գործի հարուցումը մերժել» նշանակում է՝ դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից կայացվող որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 185):

«Քրեական հետապնդումը դադարեցնել» նշանակում է՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի (դատարանի, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի) կողմից կայացվող որոշում՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 16, կետ 19, կետ 30):

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև 37-րդ հոդվածի 1-ին մասից կարելի է ենթադրել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորությամբ օժտված է նաև դատարանը դատական քննության փուլում այն դեպքում, երբ դատարանը քրեական հետապնդման մարմին չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ կետով: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասում

հետաքննության մարմինը որպես քրեական հետապնդումը դադարեցնելու իրավասություն ունեցող սուբյեկտ նախատեսված չէ այն դեպքում վերջինս ևս լիազորված է օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը՝ նախատեսված լինելով նաև քրեական հետապնդումը դադարեցնելու իրավասություն ունեցող սուբյեկտների շարքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 16-ի 19-րդ կետում:

«Քրեական հետապնդում չիրականացնել» կամ «հրաժարվել քրեական հետապնդում իրականացնելուց» նշանակում է՝ դատախազի (մեղադրողի), քննիչի կողմից կայացվող որոշում քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների կամ այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք թույլ են տալիս չիրականացնել քրեական հետապնդում, կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 35-37):

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-37-րդ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրն առանձնապես չի տարբերակել «քրեական գործի հարուցումը մերժել», «քրեական հետապնդումը դադարեցնել» և «քրեական հետապնդում չիրականացնել» կամ «քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվել» հասկացությունները, ինչն անորոշ է դարձնում նման հասկացությունների սահմանման և վիճարկվող դրույթում տարբեր հասկացությունների նախատեսման անհրաժեշտությունը:

Այս առումով, կարծում ենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասն իրավական որոշակիության տեսանկյունից վիճահարույց է:

Ինչպես հայտնի է, իրավական որոշակիության սկզբունքը պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»։ Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»¹։

Ինչպես տեսանք, «քրեական գործ հարուցել» դեռևս չի նշանակում «քրեական հետապնդում հարուցել» և «քրեական հետապնդում չիրականացնել» չի նշանակում «քրեական գործի հարուցումը մերժել»։ Այո՛, քրեական գործի հարուցումը մերժելը բացառում է քրեական հետապնդում իրականացնելը, բայց քրեական հետապնդում չիրականացնելը չի բացառում հարուցված քրեական գործի քննությունը։ Նշված հասկացությունները դատավարական տարբեր կատեգորիաներ են և չեն կարող կիսիրառվել որպես համարժեք հասկացություններ։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասության մեջ, ինչպես արդեն նշել ենք, խոսքը վերադաս դատախազի կողմից հետաքննություն մարմնի և քննիչի այնպիսի որոշումների վերացման հնարավորության մասին է, ինչպիսիք են՝ ա) քրեական գործը կարճելու մասին, բ) քրեական գործ հարուցելու մասին, գ) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները։ Նույն դրույթի 2-րդ նախադասության մեջ՝ դատելով ամբողջ հոդվածի տրամաբանությունից, դատախազության լիազորություններից և վերջինիս գործունեության միասնականության սկզբունքից, այդ նույն որոշումները նույն կերպ պետք է թվարկված լինեին իբրև գլխավոր դատախազի կողմից վերանայման ենթակա հնարավոր որոշումներ։ Մինչդեռ, խախտելով այդ տրամաբանությունը՝ երկրորդ նախադասության մեջ օրենսդիրը փոխել է գլխավոր դատախազի կողմից վերանայման ենթակա հնարավոր որոշումների ցանկը՝ որպես այդպիսիք սահմանելով՝ ա) գործի վարույթը կարճելու մասին, բ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, գ) քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները, որոնք, ինչպես արդեն քննարկել ենք, նույնական և համարժեք չեն հոդվածի առաջին նախադասության մեջ նշված որոշումների հետ։ Ուստի, այս հիմնավորմամբ, կարծում ենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին։

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը։

Վիճարկվող դրույթի անհստակության և անորոշության պատճառով այն տարբեր կերպ է մեկնաբանվում իրավակիրառ պրակտիկայում, ինչն անկանխատեսելի է դարձնում ինչպես հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի, այնպես էլ հանցագործությունից տուժած անձի սպասելիքներն այդ նորմի կիրառման, դրա հնարավոր իրավական հետևանքների առաջացման տեսանկյունից:

Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին չհամապատասխանելով հանդերձ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանափակում է հանցագործությունից տուժած անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության և իր խախտված իրավունքների վերականգման հնարավորությունը: Մասնավորապես, մի դեպքում՝ դրույթի առաջին նախադասությունը հսկող դատախազին հնարավորություն է տալիս վերացնելու, օրինակ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի կամ հետաքննության մարմնի անօրինական, չհիմնավորված որոշումը և հարուցելու քրեական գործ ապահովելու համար տուժողի իրավունքների և շահերի պաշտպանությունը և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը, իսկ երկրորդ նախադասությունը նույն տրամաբանությամբ նման լիազորություն պետք է վերապահեր գլխավոր դատախազին՝ որոշակի պայմանների պահպանմամբ: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, օրենսդիրը շեղվել է այդ տրամաբանությունից և գլխավոր դատախազի կողմից վերացման ենթակա հնարավոր որոշումների ցանկը չի նախատեսել այն նույն որոշումների թվարկածին համապատասխան, որոնք նախատեսված են առաջին նախադասության մեջ: Այս իմաստով, տուժողի իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգման արդյունավետ մեխանիզմ և գործունե կառուցակարգեր սահմանելու և համապատասխան նախադրյալներ ստեղծելու պետության պոզիտիվ պարտականությունը բավարար կատարված համարել չի կարելի: Կարծում ենք, տուժողի իրավունքների պաշտպանությունը, նրա արդար դատաքննության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի բովանդակությունը պահանջում են, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում իբրև գլխավոր դատախազի կողմից վերացվող հնարավոր որոշումների տեսակներ նախատեսվեն նաև քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական գործ հարուցելու մասին որոշումները, որը կբխի այդ նույն հոդվածի ողջ տրամաբանությունից և տուժողի արդարադատության մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքից:

Նշված նորմը չի համապատասխանում նաև դատախազության գործունեության **միասնականության սկզբունքին:**

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածից հետևում է, որ՝

- ա) դատախազությունը մարմինների համակարգ է,
- բ) դատախազությունը միասնական համակարգ է,

գ) դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, ղեկավարում է գլխավոր դատապխազը:

Գլխավոր դատախազը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրականացնում է Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված բոլոր լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության դատախազությունը՝ որպես համակարգ, միասնական է, այլ ոչ թե ապակենտրոնացված: Դատախազության համակարգի միասնականությունը ենթադրում է դատախազության մարմինների նպատակների և խնդիրների միասնականությունը, ծառայողական ենթակայության վրա հիմնված դատախազության մարմինների անկախությունը (ՀՀ գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ, ՀՀ գլխավոր դատախազի ցուցումները, կարգադրությունները պարտադիր են բոլոր դատախազների համար), ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորություններն իրականացնելիս դատախազության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործունեության միասնականությունը, դատախազներին ներկայացվող միասնական պահանջները, օրենքի խախտումների նկատմամբ դատախազական արձագանքման մեխանիզմների միասնականությունը¹:

Այսպիսով, դատախազության գործունեության միասնականության սկզբունքից ելնելով հսկող դատախազի կողմից քննիչի կամ հետաքննության մարմնի՝ վերացման ենթակա հնարավոր որոշումները նույն կերպ պետք է լիազորություն ունենա վերացնելու նաև գլխավոր դատախազը՝ դատախազության գործունեության միասնականության սկզբունքին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը իրավական որոշակիության, դատախազության գործունեության միասնականության սահմանադրական սկզբունքներին, ինչպես նաև արդար դատաքննության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքին համապատասխանության տեսանկյունից վիճահարույց է:

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 998-1000: